

ԳԵՐՄԱՆԵԱԿԱՆ ԴՈՐՊԱՏ ՀՄՄԵԼՍՇՐԵՆԸ
ԵՒ ՆՈՐԱ ՀԱՅ ՌԻՍՆՈՂՆԵՐԸ 1830—1892 թ.

Այժմեան Օստդէ կամ Բալտեան նահանգները՝—(Էստլանդ, Լիֆլանդ և Վոլբլանդ) դեռ Ռուսաստանի հետ միանալուց առաջ, շվեդացոց տիրապետութեան ժամանակ, ունէին իրենց սեպհական համալսարանը, որ աննշան չէր:

1632 թ. յուլիսի 30 ին շվեդացոց Գուստաֆ Ադոլֆ թագաւորն, երբ Նիւրէնբերգի մօտ բանակ էր դրել, ստորագրեց այն հրամանը, որով Գորպատի թագաւորական նորահաստատ գիմնազիտները փոխարկուելու էր համալսարանի, որ և անուանուեց Academia gustaviana: Այդ համալսարանը գոյութիւն ունեցաւ միայն 24 տարի, և փակուեց 1656 թ., երբ ռուսները տիրեցին քաղաքին: 34 տարի անցնելուց յետոյ, այն է 1690 թ., շվեդացոց թագաւոր Վարլոս XI, Գորպատում նորից բացեց համալսարան, որ անուանեց Academia gustaviana—Carolina: Սա էլ գոյութիւն ունեցաւ միայն 20 տարի, որովհետև 1699 թ. քաղաքական հանգամանքները, ռուսների գալու պատճառով, ստիպեցին տեղափոխել համալսարանը Պէրնաու, որ ակի պաշտպանուած էր: Բայց երբ 1710 թ. ռուսաց զօրքերը մտան Պէրնաու քաղաքը, պրոֆէսորները և ուսանողները ցրուեցին և համալսարանը դադարեցրեց իր գործունէութիւնը:

1798 թ. ապրիլի 9-ին յայտարարուեց մի կայսերական հրաման, որով Լիֆլանդիայի, Էստլանդիայի և Վոլբլանդիայի ասպետութեան միջոցներով պէտք է բացուէր մի գերմանական համալսարան այդ նահանգներից մէկում և կայսրը պարգևեց ապագայ համալսարանին լայնատարած հողեր: Կայսրը համալսարանի տեղ ընտրեց Գորպատը, որ գտնուում է Լիֆլանդիայում: Կայսերական հրամանով 1799 թ. մայիսի 4 ից, համալսարանի շինութեանց համար տեղ նշանակուեց Դոմբերգը և Մարիամեան եկեղեցու հրապարակը, որ գտնուում է Դոմբերգի ստորոտում, ուր այժմ կանգնած է համալսարանի դիւանոր շէնքը:

Բայց հողերից կայսրը շնորհեց համալսարանի շէնքը կառուցանելու համար 25,000 ռուբլի:

1800 թ. յուլիսի 12-ին Գորպատում ժողովուրդաց ասպետութեան յանձնաժողովը, համալսարանը հիմնելու վերաբերմամբ կարգադրութիւններ անելու: Բայց յունուարի 15-ին 1801 թ. հրաման եկաւ, որ համալսարանը պէտք է հիմնուի ոչ Գորպատում, այլ Կուրլանդիայի Միտաու (Միտաւա) քաղաքում: Այդ հրամանի հիման վրայ, յանձնաժողովն անցաւ Միտաու գործելու: Յանկարծ մարտի 12-ին վախճանուեց Պողոս կայսրը և գահը ելաւ Աղիքսանդր I-ին: Սրա գահ բարձրանալը կեանք տուեց նորանոր յոյսերի: Ինչպէս մի կախարդական գաւազանի նշանով առաջ եկան մի ամբողջ շարք օգտաւէտ հիմնարկութիւններ: Ի միջի այլոց 1801 թ. ապրիլի 12-ին կայսերական հրամանով յայտարարուեց, որ համալսարանը պէտք է հիմնուէր Գորպատում, որ երեք նահանգների միջավայրն է: Յանձնաժողովը նորից անդափոխուեց Գորպատ: Համալսարանը պէտք է գտնուէր ասպետութեան ինամակալութեան ներքոյ և կառավարուէր նրա միջոցներով:

1802 թ. ապրիլի 21-ին կատարուեց կայսերական Գորպատ համալսարանի բացման հանդէսը: Ապրիլի 24-ին նշանակուեցին պրոֆէսորները և մայիսի 1-ին սկսուեցին դասախօսութիւնները: Համալսարանի բացման միջոցին կային 13 պրոֆէսոր միայն և 19 ուսանող: Պրորէկտոր նշանակուած էր Աստուածաբանութեան պրոֆէսոր դոքտոր Լօրէնց Եվէրսը:

Այդ ժամանակ համալսարանը դեռ չունէր իր սեփական շէնքը և առաջին 5 տարուայ ընթացքում զետեղուած էր Լանդրաու Իօկի տան երկրորդ յարկում, որ գտնուում է «Իօհաննէս—Շտրասէ» փողոցի և Մարքտի (հրապարակ) անկիւնում:

1809 թ. յուլիսի 31-ին վերջացրած էր այժմեան համալսարանի շէնքը: 1803—1805 թ. կառուցին Դօմբերգի վրայ Անատոմիքումը, համալսարանի երեք կլինիկները՝ (ներքին, վիրաբուժական և կանանց) և 1809—1810 թ. շինեցին աստղաբաշխական դիտարանը: Այդ ժամանակներում Դօմբերգի վրայի աւերակ մայր եկեղեցին—Դօմը, որ յանուն Պողոս-Պետրոսի էր, յարմարեցրին համալսարանի գրադարանի համար: Դօմբերգը, որ մինչև այդ ժամանակ ամայի էր, պարտէզ դարձրին: Տիկին Բողէնքամպֆի պարգևած հողի վրայ գցեցին 1806 թ. բուսարանական պարտէզը:

Համալսարանական բոլոր շինութիւնները նստեցին 805,477 ուրբի, որոնցից կառավարութիւնը տուեց 735865 ուրբ., իսկ Լիֆլանդիայի, Էստլանդիայի և Կուրլանդիայի ասպետութիւնը տուեց 69,612 ուրբ.:

1802 թ. օգոստոսի 1 ին պրօրէքթօր նշանակուեց պրօֆ. դօքտ. Գէորգ Ֆրիդրիխ Պարրօտը: Սրա պրօրէքթօրութեան միջոցին, այն է 1802 թ. դեկտեմբերի 12 ին, համալսարանն ասպետութեան խնամակալութիւնից անցաւ կառավարութեան ձեռքը, որով դրամական մեծ միջոցներ էր տրուում համալսարանին: Սյդ օրից սկսուում է Գօրպատ համալսարանի պաշտօնական պատմութիւնը, թէպէտ և իրապէս բացուել էր 1802 թ. ապրիլի 21-ին:

Մեզ համար հետաքրքիր է Դորպատ համալսարանի ֆիզիկայի պրօֆ. Պարրօտի անձնատրութիւնը:

Պարրօտը մի առաջնակարգ խելքի տէր մարդ էր: Ծագմամբ ֆրանսիացի: Ֆրանսիական յեղափոխութեան միջոցին Պարրօտը փախաւ իր հայրենիքից, որ փրկուի Գիւլիօտինից: Ստ թունդ հանրապետական էր և իսկ գիտնական: Սրկար տարիներ ուսուցչութիւն էր անում Բիգայում և իր զգաստ բնակարանութեամբ վայելում էր մեծ յարգանք: Սրբ Ֆրանսիայի Լուդովիկոս XVI ի մահուան լուրը Բիգա հասաւ, Պարրօտին բանտարկեցին մի անզոյշ արտասանած խօսքի համար, բայց շնորհիւ իր բազմաթիւ բարեկամների, շուտով արձակեցին բանտից: Համալսարանը բանալիս Պարրօտին նշանակեցին ֆիզիկայի պրօֆէսօր: Պարրօտը իր պրօրէքթօրութեան միջոցին պատրաստեց համալսարանի կանոնադրութիւնը և անձամբ ներկայացրեց կայսր Աղէքսանդր I ին: Պարրօտն ունէր ֆրանսիացուն յատուկ ճարտիկութիւնը և տիրելով իր մայրենի լեզուին, որ այդ ժամանակ անպայման ընդունուած էր Ռուսաց արքունիքում, Պարրօտին հեշտութեամբ յաջողուեց մտերմանալ արքունիքում բարձր դիրք ունեցող մարդկանց հետ: Նախարար Նովոսելցովի միջնորդութեամբ ներկայացաւ Աղէքսանդր I-ին և նրան յաջողուեց իր կազմած կանոնադրութիւնը հաստատել տալ:

Պարրօտը զրեց ևս ուսանողաց վերաբերմամբ կանոնադրութիւնը—Յօման:

Մայիսի 22-ին 1802 թ. Աղէքսանդր կայսրն անցնելով Լիֆլանդիայից, մտաւ Դորպատ և այցելեց համալսարանը: Այդ

տեղ պրօֆ. Պարբուր ֆրանսիական ընտիր լեզուով, այնպիսի մի փայլուն, ողջոյնատրական ճառ ասեց, որ կայսեր սիրտը խիստ շարժեց և այդ ֆրանսիացու վառվռուն խօսքերի տպաւորութեան տակ կայսրը խոստացաւ համալսարանն առնել իր հովանաւորութեան ներքոյ:

Նիկողայոս I կայսեր ժամանակ և դրանից էլ առաջ, երբ դեռ չըկային երկաթուղիներ դէպի արևմտեան Սերուպա, Դորպատը մի տեսակ Աթէնքի տեղ էր բռնել Ռուսաստանում: Սւայդ հասկանալի է: Դորպատն իսկական գերմանական համալսարան էր. եթէ Դորպատում չըկային գիտնական հարկաւոր ոյժեր, դրանց հրաւիրում էին Գերմանիայից: Պատահում էր, որ Դորպատ համալսարանի պրօֆէսորները համարեա կէսն արտասահմանցիք էին: Այդ կերպով Դորպատի համալսարանը կապ էր պահպանում արտասահմանի համալսարանների հետ և պահպանում էր իր դիրքը գերմանական համալսարանների բարձրութեան համեմատ: Սւայդ դիրքը բռնած էր մինչև վերջը: Դորպատը բարձր էր իր գիտնականութեամբ և այն գիտնական ուղղութեամբ, որ տալիս էին պրօֆէսորները ուսանողութեանը: Դորպատ էին գնում ուսանելու ուսուց ինտելիգենտ մասի որդիքը: Այդ տեղ էին ուսել կոմս Սալագուրը, Բարարիկինը, Վերիսէյեվը, յայտնի վիրաբոյժ Պիրոգովը և այլ շատերը, որոնք ծառայել են գիտութեանը և տէրութեանը որպէս պրօֆէսորներ, նախարարներ, ուսուցիչներ և այլն:

Պրօֆէսորների և ուսանողների յարաբերութիւնները շատ մտերիմ էին. պրօֆէսորները ամեն գործում ղեկավարում էին ուսանողներին և սրանք հետևում էին նրանց: Համալսարանը գոյութիւն ունէր միայն գիտութեան համար: Այդ էր բոլորի համոզմունքը և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել այն ժամանակ: Այլ կերպ մի համալսարան չի կարող գոյութիւն ունենալ և իր բարձր դիրքի վրայ կանգնած մնալ:

Թէ որքան երիտասարդներ են ուսել Դորպատում, որքան երևելի անձինք են դուրս եկել այդ համալսարանից և ինչ դիրք են ընդունել կեանքում, դրանց բոլորի անունները և ազգանունները տպագրած են Դորպատի Album academicum գրքում:

Այժմ դառնանք գերմանական Դորպատ համալսարանում ուսած և կրթուած հայ գործիչներին և հետևենք դրանց կարգով:

Առաջին շրջան

1830—1859 թ.

1

ԽԱՂԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ

(Բանաստեղծ: Մանկավարժ):

Խ. Արովեանը ծնունդ է 1804—5 թ. Քանաքեռ, հին հայկական գիւղում, որ գտնւում է Սրեանից 7 վերստ հեռավորութեան, — հիւսիս արևելեան բարձրավանդակի վրայ: Քանաքեռի առջև տարածւում է Արարատեան լայնատարած դաշտը, որի վերջում բարձրանում է Մասիսը, Սիսը և աջակողմում լայնանիստ Արագած լեռը: Այդ դաշտի միջում կանգնած է Էջմիածնի Մայր եկեղեցին, որ է գլուխ հայոց ընդհանուր եկեղեցիների: Այդ բոլորը միասին ներկայացնում է մի սքանչելի տեսարան: Քանաքեռում, այդ բանաստեղծական դիրք ունեցող գիւղում օրօրուէլ է Արովեանի օրօրոցը մի խրճիթում¹⁾:

1814 - 15 թ. Արովեանին նրա ծնողները տարան Ս. Էջմիածին, այդ տեղ ուսում ապու համար և Սփրեմ կաթողիկոսն յանձնեց Արովեանին Անտոն եպիսկոպոսին «կարդացնելու»: Անտարակոյս, Էջմիածնում Արովեանը կարող էր սովորել մեր գրաբառ լեզուն և եկեղեցական արարողութիւնները, կարող էր ծանօթանալ մեր հին մատենագրութեան հետ և աւելի ոչինչ:

1820 թ. Արովեանը գնաց Անտոն եպիսկոպոսի հետ Հաղբատ, իսկ այդ տեղից Թիֆլիզ և մտաւ ուսանելու, 'այն ժամանակ յայտնի հայկարան, Ղարաբաղցի Պօղոս վարդապետի մօտ, ուր ուսանում էր նոյնպէս Ս. Նազարեանցը: Մնալով երկու տարի Պօղոս վարդապետի մօտ, նա անցաւ Ներսիսեան դպրոցը, որ նոր էր բացուել: 1829 թ. փետրուարի 24-ին վերջացրեց իր ուսումն երեքդասեան Ներսիսեան դպրոցում և վերագարձաւ Էջմիածին:

¹⁾ Իմ յորդորանքով, իմ քեռ-որդի 15 տարեկան հանգուցեալ Կաբապետ Յովհաննիսեան նկարեց (1884 թ. օգոստոսին) խրճիթը, և դրանից էլ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Բաշինջաղեանը իր հանճարեղ վրձինով յայտնի դարձրեց շ. Արովեանի տնակը Քանաքեռում, որ կըմնայ որպէս գեղեցիկ յիշատակ:

1829 թ. Դորպատ համալսարանի վերոյիշեալ պրոֆ. Պարբոտն եկաւ Էջմիածին, Մասիսի գագաթը բարձրանալու: Արովեանն Էջմիածնում ծանօթացաւ Պարբոտի հետ, որ ի վերջոյ մտերմացաւ Արովեանի հետ: Արովեանը յայտնել էր Պարբոտին ցանկութիւն եւրոպական ուսում ստանալու և Պարբոտը խոստացաւ հոգալ նրա մասին: Վերադառնալով Պետերբուրգ, Պարբոտը բարեխօսեց լուսաւորութեան նախարար Լիվէնի առաջ Արովեանին և թագաւորական գանձարանից նշանակեցին Արովեանի համար 300 ռուբլի տարեկան թոշակ և բացի այդ ճանապարհածախք մինչև Դորպատ:

1830 թ. սեպտեմբերի 3-ին Արովեանը հասաւ Դորպատ, որ Պարբոտը նրան սիրով ընդունեց: Այդ ժամանակ Արովեանը կը լինէր 25—26 տարեկան:

Արովեանն իր ուսանողութեան ժամանակ ամենաերջանիկ մարդն էր, որովհետև Դորպատում ունէր այնպիսի մի պաշտպան և հոգացող, ինչպէս Պարբոտն էր, որի մօտ նա ընդունուած էր ինչպէս հարազատ որդի, ընկեր, որի մօտ բախտ ունէր տեսնուելու, ծանօթանալու, խօսելու, նիւթ քաղելու Պարբոտի ընկեր պրոֆէսօրներից և դրանցից հրաւէրք ստանալու, դրանց տները յաճախելու: Այդպիսի հասարակութիւն շատ քիչ ուսանողներ ունին: Պրոֆէսօրների հասարակութեան մէջ լինելը մի մեծ բարիք է, որ ամեն մէկին չի յաջողում:

Արովեանն ունենալով մեծ ընդունակութիւններ, մնալով Դորպատ վեց տարի, աշխատելով՝ սեփհակտնացրել էր գերմանական լեզուն և ուսումնասիրել էր ֆրանսերէն լեզուն: Նրա միակ փափազն էր վերադառնալ հայրենիք և օգտաւէտ լինել իր ազգին: Նա լսում էր համալսարանում դասախօսութիւններ, բայց գլխաւորապէս ուսանում էր ուսուցչական սէմինարիայի կուրսը և հէնց այդ տեղ էլ վերջացրեց:

Արովեանը վերադարձաւ Թիֆլիս 1836 թ.: Նրան առաջարկում էին արքունական ծառայութիւն, բայց այդ չէր նրա իղձը:

Յովհաննէս կաթողիկոսը չը համաձայնեց ընդունել նրան կուսակրօնաց դասը, համարելով նրան լուտերական, չը թողեց նոյնպէս ուսուցչութիւն անելու հայոց դպրոցներում, և ասել էր նրան, «դու լաւ խմորել կարես գմիտս անմեղաց, այլ կըրթել զնոսա չէ գործ քոյ»:

Յուսահատուելով, որ հայոց ուսումնարաններում ուսուց-

չութեան պաշտօն չեն տալիս, որի համար պատրաստուել էր, նա փետրուարի 8-ին 1837 թ., կարգուեց տեսուչ Թիֆլիզի նահանգական ուսումնարանում և նոյն տեղում ֆրանսերէն լեզուի ուսուցիչ: Ստանում էր տարեկան ռոճիկ 380 ռ. և բնակարան: Այդ պաշտօնը նա ընդունեց չքաւորութեան պատճառով:

1839 թ. փետրուարի 28-ին արձակուելով հոգևոր կոչումից և մտքից հանելով կուսակրօնութիւն ընդունելը, նոյն թուի սեպտեմբերի 8-ին ամուսնացաւ գերմանուհի օր. Էմիլիա Լօօզէի հետ:

Նահանգական ուսումնարանի տեսուչ լինելով, բացեց մասնաւոր գիշերօթիկ ուսումնարան, ուր ընդունում էր հայ երեխաներին: Այդ տեղ կարող էր նա իրագործել իր մանկավարժական գաղափարները: Ճանապարհորդ Վազնեբը մեծ յարգանքով է խօսում այդ ուսումնարանի մասին:

1841 թ. Արովեանը գրեց «Վէրք-Հայաստանին»: Դրանով նա հիմք դրեց մեր այխարհիկ լեզուի գրականութեանը: Այդ ժամանակ աշխարհաբար լեզուով գրելն ընդունուած չէր և համարուում էր ազգակործան գործ:

1843 թ. յունիսի 19-ին Արովեանին նշանակեցին Երևանի դաւառական ուսումնարանի տեսուչ: Երևան տեղափոխուելու պատճառն էր, երևի մի քանի անձանց զրպարտութիւնները: Նա Երևանում էլ հիմնեց գիշերօթիկ ուսումնարան: Այդ ժամանակ Արովեանը յանկարծ ցանկացաւ թողնել իր ընտանիքը և կուսակրօն դառնալ: Ներկայացրեց խնդիրք Ներսէս կաթողիկոսին, բայց սա մերժեց:

1848 թ. մարտի 9-ին Արովեանին անյայտ պատճառով արձակեցին պաշտօնից և պետական ծառայութիւնից: Մ. Տէր Ազարեանի ասելով, Արովեանը թողեց իր պաշտօնն Երևանում որպէս զի կաթողիկոսի առաջարկութեան համաձայն զնար Թիֆլիզ, Ներսիսեան դպրոցի տեսչութեան պաշտօնն ընդունելու:

1848 թ. ապրիլի 2-ին Արովեանն Երևանում անյայտացաւ: Բայց դրանից առաջ երեք օր շարունակ խիստ մտատանջութեան մէջ էր եղել:

Խ. Արովեանի մահուան մասին կան տարաձայն կարծիքներ: Այդ հարցը վճռելու համար ես դիմեցի (1903 թ. մայիսի 26-ին) երևանցի պ. Վարդան Խաղաբաշեանին (75 ամաց), որ Արովեանի աշակերտներին է: Պարոն Խաղաբաշեանն ինձ

աչատմեց, որ նա սովորել է Երևանի գաւառական ուսումնարանում, ուր տեսուչ էր Արտվեանը, վերջացրել է իր ուսումնայդատեղ 18 տարեկան հասակում 1846 թ.: Երկու տարի դրանից յետոյ, այն է 1848 թուին, մայիսի վերջերին, թէ յունիսի սկզբին, Նասիր բէգը հրաւիրեց իր եղբօր Ասադ բէգի այգին. (որի հետ նա վատ յարաբերութեանց մէջ էր) գեօգջա ուտելու, իրեն — Վարդան Խուրաբաշեանին, Աւետիս Տէր Յովակիմեանին, Բաղդասար Աստուածատրեանին, և Այվազ Մելիք Ասիլեանին (այս երեքը վախճանուած են), որոնք նոյնպէս Արտվեանի մօտ էին սովորել: Նասիր բէգն, այդ այդու դունից ներս մտնելով և ցոյց տալով դրանց ձախ կողմում, մի մեծ ընկուզենի, որի մօտ կար մի քանդուած հողով լի հնձան, հայերէն ասել էր. «մեր տղայ ձեր Արտվեանն այս ընկուզինու տակն է թաղած հնձ»: Այդ չորս հայերը՝ ձեանալով անտարբեր Նասիր բէգի խօսածին, զնացին գեօգջա ուտելու: Վ. Խուրաբաշեանը գալով տուն, Նասիր բէգի ասածը պատմել էր իր հօրը և սա պատասխանել էր. «Վաղ թէ ուշ Արտվեանը պէտք է սպանուէր Ասադ բէգի ձեռքով» (cherchez la femme): Այդ այգին, որ գտնուում է գետառի ձախ կողմում, ամայի սարի տակ, այժմ պատկանում է Մամադ բէգ Շաֆիրբէգովին, որի հանգուցեալ հայրը նոյնպէս եղել է Արտվեանի աչակերտը:

Մայիսի 30-ին ա. Վ. Խուրաբաշեանը, Շաֆիրբէգովը և ես զնացինք սրա այգին, Արտվեանի գերեզմանի տեղը որոշելու: Մենք անցանք Փանահ խանի և Փաշան խանի տների մօտով, անցանք Երևանի հին նեղ, ծուռ ու մուռ փողոցներից մէկով և հասանք գետառին: Այդ տեղ ծուցիներք աջ և զնացինք գետառի աջ ափով, թողեցինք առաջին փայտէ հասարակ կամուրջը ձախ, անցանք երկրորդ նոյնանման փայտէ կամուրջով և մտանք մի նեղ, ծուռ ու մուռ փողոց, որ կամուրջի դիմացն էր: Այդ փողոցի ձախ կողմում, միայն այգիները պատեր են և չը կայ ոչ մի տուն: Հասանք ձախակողմեան առաջին տան դռանը: Այդ էր Շաֆիրբէգովի այգու դուռը: Մտանք ներս: Դռան մօտ, աջ կողմում գտնուում է պարսկական հին ձի, մի համարեա քանդուած տուն: Այդ տան մօտից վազում է մի առուակ դէպի այգու դուռը և անցնում է փողոցի պատի տակով, թողնելով իր և տան արանքում մի նեղ ճանապարհ: Այդ առուի ձախ ափին կանգնած են 4 թթենի: Սրանցից մօտ 6—7 քայլ հեռաւորութեամբ, դէպի ձախ, գտնուում է մի եռանկիւնի

փոս, որի մէջ այժմ տնկած են զանազան մրգատու ծառեր: Այդ փոսն է խորուժեամբ մօտ 1½ արշին: Այդ եռանկիւնի փոսի սահմաններն են. արևելքից (այն է տան կողմից) մի քա-
րէ հասարակ պատ, բարձրութեամբ մօտ 1½ արշին, որի դա-
գաթը հաւասար է գետնին (տան կողմից), և որը մի քանի
տեղ փուլ է եկել: Այդ պատը կազմում է եռանկիւնու հիմքը:
Ի՛նչպի արևմուտք՝ դռնոււմ է եռանկիւնու գագաթը: Եռան-
կիւնու մի կողմը (դէպի հարաւ) կազմում է այն փողոցի պա-
տը, որով եկել էինք, իսկ միւս կողմը (հիւսիսայինը) մի թումբ
է, որ դարձած է դէպի այգին: Մի ծերունի, հարևան թուրքի
ասելով, այդ փոսի մօտաւորապէս մէջ տեղում, առաջ կանգ-
նած է եղել վերոյիշեալ մեծ ընկուզենին, որ այժմ չը կայ:
Պ. Վ. Խուրարաշեանը մտնելով փողոցի դռնից ներս, կանգնեց
մի առ ժամանակ դիտելով տեղերը, և ցոյց տալով ինձ այդ
եռանկիւնի փոսն, ասաց. հէնց այս փոսի մէջ տեղն էր կանգ-
նած ընկուզենին, որ Նասիր բէգը ցոյց տուեց մեզ, որի տակ
թաղած պէտք է լինէր Աբովեանի դիակը, ահա այս քանդուած
պատն էլ (եռանկիւն փոսի հիմքը) հնձանի մի պատը պէտք է
մնացած լինի» ..

Յոյս ունիմ, սր պ. Մամադ բէգ Շաֆիրէզովը, որ մի սի-
րալիր երիտասարդ է, թոյլ կը տայ այդ եռանկիւնի փոսը
փորհրելու և Աբովեանի ոսկրները գտնելու, որոնց կարելի
կլինի տեղափոխել Երևանի Հայոց նոր գերեզմանատունը: Ե-
թէ այդ տեղ չը գտնուեն Աբովեանի ոսկրները, պէտք է են-
թադրել, որ տեղափոխած են:

Աբովեանին չը յաջողեց իրագործել իր գաղափարները
ամբողջովին. Նա չը տեսաւ ևս իր «Վէրք Հայաստանին» տը-
պագրած, որ առաջին անգամ լոյս տեսաւ 1853 թ.: Այդ ժա-
մանակ, ես Թիֆլիզումն էի, լաւ միտս է, որ Դարբիէլ Խատի-
սեանը տնից տուն էր տանում այդ գիրքը, գտնում էր և աչ-
խատում էր ծախել, այն էլ մէկ ուղբիով, բայց առնողների
թիւը շատ քիչ էր և նա դանդատուում էր հայերի անտարբե-
րութեան մասին:

Աբովեանի գաղափարները լեզուի վերաբերմամբ չէին ըն-
դունուում սկզբում. նա բացատրում էր, խնդրում էր, խոր-
հուրդ էր տալիս գործադրել աշխարհաբար լեզուն, բայց այն
ժամանակ այդ սրբապղծութիւն էր համարուում, սակայն նրա-

նից յետոյ, շուտով իրագործեցին նրա ցանկութիւնը և մեր աշխարհիկ զրականութիւնը սկսեց աճել:

Ով որ կամենում է ճանաչել Արուիեանին, խորհուրդ կնք տալիս կարդայ «Վէրք Հայաստանին», որ վերջին անգամ հրատարակեց Իսահակ Ժամհարեանը Մոսկովում 1897 թ. որին կից է Արուիեանի մանրամասն կենսագրութիւնը և նրա շարագրութիւններէ ցուցակը:

Արուիեանի մասին գրել է Ներսէս Տէր-Վարապետեանը «Խաչատուր Արուիեան» վերնագրով, որ տպագրուած է «Լուսնայում» և առանձին գրքոյկով էլ հրատարակուեց Թիֆլիզում 1897 թ.: Նրա մասին գրել է ևս Յովհաննէս Շահնազարեանը «Խաչատուր Արուիեանի հասարակական և զրականական գործունէութիւնը» Մոսկով 1899 թ.:

Սրանում 1881 թ. մտայ Խաչատուր Արուիեանի որդի—Վարդանի մօտ, որ իմ ձին ընկերս էր: Նրա մօտ տեսայ նրա հօր իւղաներկ պատկերը: Սա շատ ուրախացայ, որ դտայ մեր հուշակաւոր Արուիեանի պատկերը: Վարդանին հարցրի զրա լուսանկարի մասին, նա ասաց, որ լուսանկարն երբէք չի վերցուել: Վարդանն ինձ պատմեց որ այդ պատկերը 15 տարի շարունակ կորած էր համարում, և գտնուում էր մի պարոնի մօտ, որ սեպհականացրել էր: Չը գիտեմ Վարդանն ինչ միջոցներով կրկին ձեռք բերեց: Սա մեծ դժուարութեամբ համոզեցի նրան տալ ինձ այդ պատկերը Թիֆլիզում լուսանկարելու համար, որովհետև կարող էր կորչել, այրուել և մեր զրականութիւնը զրկուած կը լինէր այդ պատկերից: Նա ինձ հաւատաց և ես լուսանկարել տուեցի Թիֆլիզում (1881 թ.) կարծեմ Բարկանովի մօտ և իւղաներկ պատկերը վերադարձրի իրեն: Այժմ Խաչատուր Արուիեանի լուսանկարը կարելի է տեսնել ամեն մի հայի սեղանի վրայ, սակայն այդ իւղաներկ պատկերը պէտք է այժմ պատկանէր Էջմիածնի Թանգարանին, որ անկորուստ մնար:

Խաչատուր Արուիեանը գործեց իր հայրենիքում 1836—1848 թ., ընդամենը 12 տարի: Նա ունեցաւ մի որդի—Վարդան և մի աղջիկ — Ջարմանդուխտ, որին մայրն անուանում էր Աղեւայիդա: Այդ աղջիկն ամուսնացաւ Երևանում ուսուցիչգործի Բաժովսկու հետ, ունի որդիք Իւլիա, Օլգա, Ջինադիա, Վլադիմիր (բժիշկ): Վարդանն ամուսնացաւ Թիֆլիսեցի օր. Կատարինէ Եարալեանի հետ և ունի որդիք՝ Կոստանդին, Վիկտօրիա (Մարիամ), Լևոն, Ալոտ, Շուշանիկ:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՅ

(Դքստոր արևելեան գրականութեան և պրոֆ. պարսկերէն լեզուի և պարեան ճեմարանի. Խմբագիրը «Հիւսիսախալի»):

Ստեփաննոս Նազարեանցը, Խոյեցի գաղթական, Սայի քահանայի չորրորդ զաւակն էր, ծնունց Թիֆլիզում (Հաւլաբարում) 1814 թ. մայիսի 15-ին, կարգալ գրելը սովորեց իր հօր մօտ, յետոյ մտաւ Պօղոս վարդապետի ուսումնարանը, որ բացել էր Ներսէս V-ը: Այդտեղ սովորեց և Աբովեանը: 1824 թ. բացուեց Ներսիսեան դպրոցը: Նազարեանցն անցաւ այդ դպրոցը և վերջացրեց 1827 թ. Աբովեանից մի տարի յետոյ, որովհետև անցաւ 4-րդ դասատունը, որ նոր էր բացուել:

Նրբ պրոֆ. Պարբոտը 1829 թ. եկաւ Կովկաս, տեսել էր Նազարեանցին Աբովեանի ցուցմունքին համաձայն և խորհուրդ էր տուել գնալ Դորպատ: Աբովեանն էլ Դորպատում եղած ժամանակ ձգում էր Նազարեանցին դէպի Դորպատ և բժ. Սողոմոն Տէր Առկասեանն յանձն առաւ հոգալ Նազարեանցի ծախսերը: Նազարեանցը գնաց Դորպատ 1832 թ.: Նախապատրաստուելուց յետոյ մտաւ համալսարան 1835 թ. սեպտեմբերին: Սկզբու՛ սովորում էր կամերալ գիտութիւնները, յետոյ անցաւ բժշկական մասը, վերջապէս ուզեց ուսանել լեզուաբանութիւն և մնաց Դորպատում ընդ ամենը ութ տարի, նա իր ուսումը վերջացրեց 1840 թ.: Պարզ է որ Աբովեանը և Նազարեանը միասին եղել են Դորպատում 1832—1836 թ., այն 4 տարի: Կասկած չըկայ, որ զրանք որպէս հին ընկերներ, Պօղոս վարդապետի ուսումնարանի և Ներսիսեան դպրոցի, տեսնում էին և Նազարեանցը պէտք է մուտք ունենար պրոֆ. Պարբոտի հասարակութեան մէջ և վայելէր այդ մտաւոր և բարոյական հասարակութեան բարիքը Աբովեանի հետ միասին:

Դորպատում վերջացնելուց յետոյ Նազարեանցը գնաց Պետերբուրգ և 1849 թ. Կազանի համալսարանում քննութիւն տարով ստացաւ դօքտորի աստիճան և նշանակուեց արևելեան լեզուների պրոֆէսորի օգնական: Կազանից եկաւ Մոսկով և ընդունեց Լազարեան ճեմարանում պրոֆէսորի պաշտօն պարսկական լեզուի և գրականութեան:

ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նազարեանցը մտնելով գերմանական հասարակութեան մէջ, այն էլ, Պարրօտի պրօֆէսօրական ընկերութեան մէջ, նա պէտք է իր վրայից թափ տար հայկական դպրութեան փոշին, որ նստել էր նրա վրայ իր հօր տանը, Պօղոս վարդապետի ուսումնարանում, Ներսիսեան դպրոցում: Ապրելով ութ տարի Դորպատում, պէտք է ընդունէր գերմանական պրօֆէսօրներէ ռգին և իր հոգին նորից մկրտէր գերմանական գիտութեան և հասարակութեան աւազանի մէջ և կերպարանափոխուէր: Այդ պատճառով զարմանալի չէ, որ նա խորամանկ չէր, որովհետև խորմամեկութիւնը ընաւորութեան այնպիսի մի յատկութիւն է, որ ստորացնում է մարդուս արժանաւորութիւնը բարեկիրթ հասարակութեան մէջ: Նա, ինչպէս և Դորպատի Պրօֆէսօրը, պարզամիտ էր, հաւատացող էր, իդէալիստ էր: Գերմանական կրթութիւն ստացողները դառնում են իդէալիստ, որովհետև սնւում են Շիլլերի և Գեթթէի գաղափարներով: Նազարեանցը քաղցրաբարոյ էր և կարեկից մարդկանց, անբախտութեանց ժամանակ: Նա անընդունակ էր մէկին վատութիւն անելու: Երբ Մոսկովում նրա հայ բարեկամներն ասում էին նրան թէ «Ձեզ խաբու՞մ են», նա պատասխանում էր «Է՛հ, ազնիւ բարեկամներ, փառք Աստուծոյ, որ ես չեմ խաբում, այլ ինձ են խաբում»: Սակայն Նազարեանցը միևնոյն ժամանակ կրակոտ, կրքոտ և տնհամբեր մարդ էր: Նա բացատրում էր ամեն բան հանգստութեամբ, բայց և պահանջող էր, լաւ զինուած էր համոզմունքով: Երբեմն ստիպուած էր լինում արտայայտել իր ցանկութիւնները կոպտութեամբ:

Նազարեանցի մասին կան շատ անեկդոտներ, որոնք որոշում են նրա բնաւորութիւնը: Մի օր նա բացատրում էր մի վաճառականի, թէ կաթողիկոսը մեծ բարիք է անում ազգին, որ հիմնում է էջմիածնում Ակադեմիա: Երբ վաճառականը հարցրեց թէ, ի՞նչ է նշանակում «Ակադեմիա», Նազարեանցն ասաց. «տօ՛ւ եղբայր սիրելի, ինչպէս կարելի է այդպիսի բան չըզիտենալ» և հեռացաւ նրանից անբաւական: Մի հարուստ Թիֆլիզեցի, որ հայոց ուսումնարանի հոգաբարձու էր, Մոսկովում գնացել էր Նազարեանցի մօտ: Սա դիմաւորեց հոգաբարձուին և հարցրեց, «ո՞վ էք, և ի՞նչ կամիք»: Այցելուն յայտնեց իր ազգանունը և ասաց, որ կամենում է ծա-

նօթանալ և խօսակցել նրա հետ: Նազարեանը հարցրեց. «Դուք այն հոգաբարձուն էք, որ աշակերտներին հրապարակ քաչեցիք և սոսիկանատնում ծեծել տուիք... ներեցէք, ես ձեզ տեսնել չըկամիմ և ճանաչել իսկ ոչ»: Այդ ասելով, դուռը հիւրի երեսի վրայ փակեց: Այդ հոգաբարձուն պատահելով իր բարեկամներին ասել էր, «ձեր գոված Նազարեանցը հէնց կապովի գիծ է եղել»: Մի Հաշտարխանցի վաճառական եկել էր նրա մօտ: Երբ Նազարեանցը նրա հետ հայերէն էր սկսել խօսել, վաճառականը ներողութիւն էր խնդրել, որ հայերէն լաւ չէ խօսում և ցանկութիւն էր յայտնել ռուսերէն խօսել: Նազարեանցը անբաւական պատասխանել էր, թէ կարող է խօսել ինչ լեզուով կամենում է և թէ ինքը Նազարեանցը շատ լեզուներ գիտէ և կը հասկանայ նրան: Հիւրը խօսել էր ռուսերէն և շատ սխալներ էր արել: Նազարեանցը նրան ասել էր «եղբայր պատուական, պիտոյ է ասել որ դուք ռուսերէն էլ չը գիտէք խօսել»: Նազարեանցը դայրանալով մի հարուստ վաճառականի վրայ, որ իրեն խելօք էր կարծում, որովհետև փող ունէր, և աշխատում էր Նազարեանցին խելք սովորցնել, խօսելու ձևն էլ չիմանալով վիրաւորում էր Նազարեանցին, վրդովուած ասաց նրան, «եղբայր պատուական, պիտոյ է ասել, որ դուք շատ յիմար էք»: Այդ ասելով Նազարեանցը շուռ եկաւ ու գնաց, ծռելով գլուխը մի կողմ, որ խիստ բարկութեան նշան էր: Նազարեանցի «եղբայր պատուական» և «պիտոյ է ասել» խօսքերը 60-ական թուականները ուսանողների մէջ շատ յաճախ էր կրկնուում կատակի համար, երբ հարկաւոր էր լինում մի ազգու խօսք գործադրել:

Նազարեանցը շատ ընդհարումներ է ունեցել ինքնակոչ ուսումնականների և մանաւանդ հարուստ հայ վաճառականների հետ, որովհետև վերջինները վայելելով մեծ յարգանք իրենց համաքաղաքացիներից միայն իրենց հարստութեան համար, մտնում էին Նազարեանցի տունը ծանօթանալու նրա հետ, ուր տեսնում էին պրօֆէսորական պարզութիւն և ոչ մի չքեղութիւն, ուր հարկաւոր էր գործադրել խելք ու գիտութիւն: Դրանցից ամեն մէկն աշխատում էր իր ողորմելի խելքը ցոյց տալ և խելք սովորցնել Նազարեանցին: Կասկած չըկայ, որ դրանք Նազարեանցի համար շատ ձանձրալի էին: Եւ ահա այդտեղ էր, որ Նազարեանցը գործադրում էր իր սիրած «եղբայր պատուական, պիտոյ է ասել, որ դուք»... Քրազները: Ես յաճախ



էի տեսնում Նազարեանցին Պետերբուրգում, երբ սովորում էի Նզեանի պանսիօնում և ներկայ էի լինում Նազարեանցի խօսակցութեանը և այդ տեսակի գանգառներին:

Նազարեանցը մի առանձին տաղանդ չէր, ստեղծագործող չէր, չունէր արտակարգ շնորհքներ, որ շնորհուում է ընտրեալներին վերևից, բայց ընդունակ և զիտուն մարդ էր, սեպհականացրել էր եւրոպական գաղափարները ու հայեցակետերն, ունէր ուժեղ կամք, տոկուն էր, անկեղծ սիրում էր իր ազգը և նրա զգայուն սիրտը լցուած էր ազնիւ հայրենասիրութեամբ:

ՆԱԶԱՐԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Նազարեանցի զրական գործունէութիւնը ժողովուած է գլխաւորապէս «Հիւսիսափայլ» շուրջը, որ նա սկսեց հրատարակել Մոսկովում 1858 թ. յունուարից և շարունակեց մինչև 1864 թ.:

Նազարեանցն ունէր զիտութեան մեծ պաշար և բացի այդ աշխատասէր մարդ էր: Նա ունէր այն աստիճանի մեծ ցանկութիւն լուսաւորութիւն տարածել իր ազգակիցների մէջ, որ պատրաստ էր ամեն ինչ զոհել, իր այդ նպատակին հասնելու համար: Այդ պատճառով նա սկսեց հրատարակել «Հիւսիսափայլ»: Նազարեանցն, աւելի զիտնական էր, քան պուրլիցիստ, կամ ժողովրդի մէջ գործող: Հաստատամտութեամբ տարածելով իրեն սեփականացրած եւրոպական գաղափարները, նա դարձաւ վերանորոգիչ, յեղափոխիչ մեր կեանքի, գրականութեան, լեզուի և ամենայն կերպ ճիգ էր թափում մտցնել մեր գրականութեան մէջ առաջադիմութեան ոգին:

Տեսնենք, թէ մեր ինքնակոչ գիտնականները և արեղաները, նրա որ կարծիքների և գաղափարների դէմ էին մաքառում և պատերազմ յայտնում:

Նազարեանցը կրկնելով գիտութեան խօսքն, ասում էր. «Հայոց լեզուն Ադամի և Նոյի լեզուն չէ»: Դա պատճառ դարձաւ սաստիկ աղմուկի: Նազարեանցն ասում էր. «Կրօնն է ազգի համար և ոչ ազգը կրօնի համար»: Այդ կատաղեցրեց հոգևորականներից ոմանց և այն ժամանակուայ ազգասէրներին: Նա ասում էր. «Հայը չի կարողանում գործել ընկերութեամբ», թէ

«մարդ համարուում է հայերի մէջ միայն հարուստը», թէ «վաճառականը փախուում է գրքից, այդ պատճառով չի կարողանում իր լեզուով մաքուր խօսել»: Նա հաստատում էր, որ «մեր լեզուն մեր խորթ զաւակն է դարձել», «մեր վաճառականը շուտ է սովորում լաւ ուտել, խմելուն և ասլերու ձևերին, բայց ոչ կարգալուծն»: Նա հաստատում էր թէ «մեր ժողովուրդը հետզհետէ կրթուում է, բայց հոգևորականութիւնը մնում է խորին տգիտութեան մէջ և փորձ էլ չի փորձում առաջադիմելու»։ Ասում էր թէ «եկեղեցին պէտք է լինի բարոյական կրթութեան պարագլուխ, պէտք է առաջ դնայ ժամանակի և գիտութեան հետ և այն եկեղեցին, որ վախենում է լուսաւորութիւնից, նա՛մանայն միջոց դործ է դնում պահել իր ժողովուրդը տգիտութեան ստորին աստիճանի վրայ, կամենում է կործանել նրան: Խցերի մէջ սնուած, մարդկութիւնից օտարացած կղերականը չի կարող առաջնորդել ժողովրդին: Մեր հոգևորականի նման հոգևորականը կարող է միայն խոչնդոտ լինել լուսաւորութեանը»: Նա միշտ քարոզում էր, «թէ փրկութիւնն աշխարհական կրթութեան մէջ է: Կրօնը և ազգութիւնը ջուր բաներ են: Հայոց եկեղեցին պէտք է ենթարկուի մի ինքնուրոյն վերանորոգութեան, որի իրազործման համար անհրաժեշտ է նախ կրթել, նախապատրաստել ժողովուրդը, հոգևորականութիւնը»: Այդ վերանորոգութիւնը վերաբերում էր միայն եկեղեցական կառավարութեանը և ոչ երբէք դաւանութեան:

Ահա թէ ինչ մտքեր էր քարոզում Նազարեանցը, որոնց գէ՛մ այժմ հազիւ թէ մէկը լսողքի: Այդ հարցերի և դրանց նման նոր գաղափարների պատճառով, այն ժամանակ վէճը հետզհետէ բացուում էր և լայնանում, խորանում էր մի կողմից Նազարեանցի, միւս կողմից հոգևորականութեան և հասարակութեան մէջ:

Այդ գաղափարներն էին, որոնք պատճառ դարձան, որ հասարակութիւնը, հոգևորականութիւնը, խաւարապաշտ ազգասէրներն, ինքնակոչ գիտնականներն ու զանազան գոյնի Արարատեաններն ու Չէրքէզեանները, քահանայ Մանգինեանները և այլն, միանալով, պատերազմ յայտնեցին Նազարեանցին և այն փոքրիկ առաջադէմ նորաբոյս խմբին, որ միացել էր Նազարեանցի հետ:

Մեր հասարակութիւնը և հոգևորականութիւնը դեռ պատ-

րաստ չէին ըմբռնելու եւրոպական նոր գաղափարները: Նա-
գարեանցն իր Հիւսիսափայլի մէջ աշխատում էր ժողովրդակա-
նացնել այդ գաղափարները և տարածել զիտութիւն, որից ծա-
գում է մտաւոր լոյսը և ազատել հայերին արեղանների ազդե-
ցութիւնից:

Նագարեանցն ունէր մեծ հեղինակութիւն և պատիւ Մոս-
կովի հայ ուսանողութեան և հասկացողների առաջ: Այդ պատ-
ճառով էլ նա կարողացաւ ձգել դէպի իրեն տաղանդաւոր,
զարգացած և աշխատասէր երիտասարդների մի խումբ: Այդ
խմբում փայլում էին Միքայէլ Նալբանդեանը (Կոմս Էմմանուէլ),
Սմբատ Շահաղիգեանը, Մելիք-Յակոբեանը (յետոյ Բաֆֆի),
Ռափայէլ Պատկաճեանը, Գէորդ Բարխուդարեանը, Ստեփան
Ստեփանեանը (յետոյ Խսրէն Եպիսկոպոս Ստեփանէ), Միքայէլ
Միանասրեանը և այլ շատերն, իսկ զիւսաւոր աշխատողն ինքը
Նագարեանցն էր, որ աւելի թարգմանիչ էր քան թէ ինքնու-
րոյն գրող և գործ ունէր միայն գիտութիւնների հետ:

Այժմ մի չի ճանաչում «Հիւսիսափայլի» այդ տաղանդա-
ւոր աշխատակիցներին, որոնք նուիրեցին իրենց ամբողջ կեան-
քը ինքնուրոյն գրողածքների, մեր ազգային լուսաւորութիւնն
առաջ մղելու համար: Այժմ գրանց փառաբանում է այն ժա-
մանակուայ խաւարամիտների սերունդը, որովհետև ժամանակ-
ները փոխուում են, մարդիկ էլ նրանց հետ են փոխուում:

«Հիւսիսափայլը» ներկայացնում էր գիտութիւնների վե-
րաբերեալ յօդուածներ, վէպեր, բանաստեղծութիւններ և այլն,
բայց ուշագրութիւն չէր դարձնում քաղաքական հարցերի վրայ:

Նագարեանցին առանձնապէս թշնամանում էին այն հները
և բոլոր հայկական փտած, ինքնուրոյն լեզուագէտները, որոնք
հակառակ էին աշխարհաբարին, որով և գրւում էր «Հիւսի-
սափայլը»: Դրանք չէին հասկանում, որ գրաբառը մեռած է,
չի կարող գործածական լեզու դառնալ և նոյն իսկ հնումն էլ
գործածական չի եղել: Նագարեանցն ասում էր, թէ գրաբառը
պէտք է լինի շտեմարան մեր աշխարհաբարի համար, պէտք է
գրաբառից վերցնել խօսքեր, դարձուածներ, ոճեր, աշխարհա-
բարը գեղեցկացնելու, ճոխացնելու համար: Չը գիտէին, թէ
ամեն գործնական լեզու պէտք է շարունակ վերանորոգուի և
ձգտի կատարելագործութեան: Չէ որ նոյնը կատարուել է յու-
նարէնի, լատիներէնի և նորագոյն լեզուների հետ, որ մի բնա-
կան օրէնք է և դրա պատճառով ոչ մի յուսահատութեան տե-

դիք չկայ: Ինչպէս կարելի էր, որ հայոց լեզուն բացառութիւն կազմէր:

1853 թ. Նազարեանը հրատարակեց աշխարհաբար լեզուով «վարդապետարան կրօնի»: Պահպանողականները զարմանում էին, չէին հասկանում, որ նա չը չինելով հոգևորական, համարձակուել է գրել կրօնական մի գիրք, այն էլ աշխարհաբար լեզուով: Նազարեանցի վրայ նայում էին հնադաւանները որպէս եկեղեցու, լեզուի, ազգութեան թշնամու վրայ:

Նազարեանցի գլխաւոր թշնամիներից մէկն էր Առաքել մարտավետ Արարատեանը, որ ունէր միայն Ներսիսեան դպրոցի 4 դաստան տուած գիտութիւնը: Դա «վարդապետարան կրօնի» դէմ իր գրած գրքոյկում, կատաղում էր Նազարեանցի այս խօսքերից թէ՛ «հայերն անտուն անտէր են»: Սև դրա դէմ Արարատեանն ասում էր «ասած է, թէ իմաստունները հանգիստ են սիրում, յիմարները հայրենիք: Աստծուն է պատկանում ամբողջ երկիրն, աշխարհը և նրա բոլոր բնակիչները: Ապա ուրեմն, որտեղ էլ լինինք, այնտեղ էլ մեր տունն է և մեր հայրենիքը, և բարեկամները և ազգականները և սիրելիքը»: Որքան ապուշ դադափար: Ահա այսպիսի մարդկանց դէմ պէտք է մաքառէր Նազարեանցը:

Հայոց հնացած և խունացած, ինքնակոչ գիտնականները կատաղած էին Նազարեանցի դէմ, որ կամենում էր մեր հին կարգերն ու հասկացողութիւնները տակն ու վրայ անել և այդ Արարատեանը թիֆլիզի կուսակցութեան պարագլուխն էր, տարածում էր իր այն միտքը, թէ Նազարեանցն ազգի թշնամին է, ազգի տուն քանդողն է, լուտերական է.— կովկասում ամեն տեղ քարոզում էին, Արարատեանին հաւատացողները, և խորհուրդ էին տալիս չը ստանալ Հիւսիսափայլը, հէնց այդ պատճառով թիֆլիզում Հիւսիսափայլին ստորագրուել էին միայն 10 հոգի:

Նազարեանցի հակառակորդներից մէկն էլ էր հնամուլ և կրքոտ Չէրքէզեանը, որ նոյն իսկ համալսարանական էր: Սա «Ճառքաղում» (Մսեր Մսերեանի օրգանը) հրատարակեց մի յօդուած, որով ապացուցում էր, թէ Նազարեանցը բողոքական միսիոններ է, ուղարկուած է հայերին կրօնափոխ անելու համար: Երբ Նազարեանցը 1861 թ. կամեցաւ մի ուսումնարան բանալ Մոսկովում, Չէրքէզեանը և սրա կուսակիցները դրին Նազարեանցի առաջ ամենայն տեսակ խոչնդոտներ և ասում էին,

Թէ Նազարեանցն ուսումնարան է բանում հայերի մէջ լուսե-
րականութիւն տարածելու համար: Թիֆլիզումն էլ Արարատե-
անի հետ Նազարեանցի դէմ գործում էր «Մեղուկ» խմբագիր
Ստեփան քահանայ Մանդէնեանը: Մի խօսքով կատարի պա-
տերազմ էր բացուել խաւարի և լուսոյ մէջ: Չէրքէզեանի հայ-
հոյանքներին չափ ու սահման չըկար: Դա մի կըքոտ և ստոր
ընաւորութեան մարդ էր և ոչ իւելացի, որովհետև մի քանի
անգրագէտ և հարուստ մարդկանց գործիք էր դառել: Չէրքէ-
զեանի մեղադրութեանց հիման վրայ, որ նա գրաւոր ուղարկել
էր էջմիածին, Սինօզը դադարացրեց Հիւսիսափայլը և Մատ-
թէոս կաթողիկոսը խնդրեց կառավարութեանը դադարեցնել
տալ Հիւսիսափայլի հրատարակութիւնը: Գարբիէլ կպիսկոպոս
Այվազովսկին էլ այդպէս մի խնդիրք ուղարկեց Բնատարաբայից
կառավարութեանը, բայց երկուսի խնդիրքներն էլ մնացին ա-
նուշագիր:

Նազարեանցն առաջարկում էր հիմնել մի բարեգործական
ընկերութիւն, հայերի նիւթական և բարոյական կեանքը բարե-
կարգելու համար, բայց այդ չը յաջողեց, իսկ դրա հետևանքն
այն եղաւ, որ Նոր-Նախիջևանում հիմնուեց բարեգործական ըն-
կերութիւն և Բագում մարդասիրական ընկերութիւնը, որի
հիմնադիրն էր բժիշկ Դաւիթ Ռոստոմեանը:

Հիւսիսափայլը 1862 թ. ունէր ամենաշատ բաժանորդ,
այն է 170, որով չէր կարող պահպանուել:

Ի վերջոյ Նազարեանցը համոզուեց, որ առաջ պէտք է
ուսումնարաններ բանալ կըթել ժողովուրդը, լեզու սովորցնել,
գրքեր տպել և միայն յետոյ, հրատարակել օրագիր և ամսագիր:
Հէնց այդ էր պատճառը, որ 1861 թ. Նազարեանցը կամեցաւ
դպրոց բանալ, որ չըյաջողուեց:

Հիւսիսափայլը դադարեց 1864 թ. դրամական պակասու-
թեան պատճառով: Ուրեմն հրատարակուեց 1858—1864 թ.
այսինքն կեանք ունեցաւ միայն 6 տարի (1863 ին չհրատա-
րակուեց):

Հիւսիսափայլի հրատարակութեան ժամանակ Նազարեանցը
չարունակում էր իր դասախօսութիւնները Լազարեան ճեմա-
րանում:

1869 թ. Նազարեանցին հրակիրեցին Թիֆլիզ Ներսիսեան
դպրոցի տեսուչ: Դրա համար Գէորգ կաթողիկոսը տուեց իր
հաւանութիւնը և կարծես թէ կատարուում էր Նազարեանցի
ցանկութիւնը, այն է ղեկավարել մի հայոց ուսումնարան և

մարդիկ պատրաստել: Այդ կերպիւ Նազարեանցը վերադարձաւ իր ծննդավայրը: Սակայն այստեղ էլ չիրագործեցին նրա ցանկութիւնները, որովհետեւ ինտրիգաները շարունակուում էին և ըստ հայոց սովորութեան ամեն մէկն իրեն տէր էր համարում դրպրոցի, խրում էր իր մատը դպրոցի գործերի մէջ: Պահանջը շատ էր, իսկ աշխատողներ քիչ: Նազարեանցը Թիֆլիզից Գանանեանցին գրած նամակի մէջ, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանն անուանում է տասներկու զլխանի վիշապ, և աւելացնում է թէ, «զրանց ջանքն այն չէ, որ ազգի մանուկները ժամանակի հետ առաջ գնան, այլ վայրիվերոյ, անկարգ ուսմամբ անմտանան միանգամայն»: Յետոյ ասում է թէ «մի սարսափելի անմիաբանութիւն, մի բթամիտ անհոգութիւն տիրապետած է դպրոցում, ոչ մի խնդիր, ոչ մի առաջարկութիւն իմ կողմից, պատկանեալ ուսումնարանի, թէ արտաքին և թէ ներքին բարեկարգութեանը, մինչև այժմ գտած չէ ուշադրութիւն: Վայրիվերոյ շատախօսութիւն և վիճաբանութիւն և կորուստ ժամանակի շատ, բայց վճիռ, որոշումն և գործավարութիւն ոչ մի: Որչափ գլուխ, այնչափ կարծիք: Հոգաբարձուների ժողովները շատ անկանոն, երկուքը կան, չորքը պակաս են, չորքը կան, ութը պակաս են և ատենապետը դրեթէ միշտ բացակայ: Ահա մեր հայկական ուսումնարանի կառավարութեան պատկերը, ողբալի պատկեր»:

Որքան ճիշտ է նկարագրել Նազարեանցը մեր Հոգևոր դպրոցի պատկերը, միթէ այժմ էլ միևնոյն դրութեան մէջ չեն մեր թեմական դպրոցները:

1871 թ. հոգաբարձու Խզմիրեանցը յայտարարեց հոգաբարձութեանը՝ թէ ուսուցիչների գործունէութիւնը շատ պակասաւոր է: Հոգաբարձութիւնը տուգանքի ենթարկեց ուսուցիչներին բաց թողած դասերի համար, և նկատողութիւն արեց: Նազարեանցը լռութեամբ տարաւ այդ կարգադրութիւնը: Դրանից յետոյ մի այլ հոգաբարձու, այն է իշխան Մ. Բէհբուզեանը որ ինքն հայերէն չը գիտէր, զեկուցում տուեց հոգաբարձութեանը, յայտնելով, թէ հայերէն լեզուն 14 դասարաններում գերազանց է եղել, իսկ Նազարեանցի դասարանում, հինգերորդում, ոչ համապատասխան: Նազարեանը լսելով այդ նկատութիւնն, իսկոյն հրաժարական տուեց: Նազարեանցը Թիֆլիզից հեռացաւ որպէս բարեկամ հոգաբարձութեան, բայց և հրաժեշտի ճաշի ժամանակ, ի միջի այլոց, ասաց, որ լինեն աւելի ազ-

գասեր քան թէ անձնատէր, աշխատեն յաղթել անձնական ախտերին, որովհետև այդ յաղթութիւնն ամենագեղեցիկն է բոլոր յաղթութիւններէց և աշխատեն միաբանութեամբ շինել ազգի տունը:

Նազարեանցը վերագառնալով Մոսկով, նորից ստանձնեց իր նախկին պրոֆէսորական պաշտօնը Լազարեան ճեմարանում:

Նազարեանցը վախճանուեց Մոսկովում չքաւորութեան մէջ: Նրա մահարձանի վրայ գրած է. ծնուեց 1812 թ. վախճանուեց 1879 թ. ապրիլի 26-ին:

Ուրեմն նա ապրեց 67 տարի և գործեց 1840—1879 թ. այն է 39 տարի:

Նազարեանցի մահուանից յետոյ ամեն տեղ կատարում էին հոգեհանգիստներ, ամեն տեղ արտասանած ճառերի մէջ գնահատում էին նրա գործունէութիւնը:

Մեր ազգային առածն ասում է. «Գնա մեռիր, արի սիրեմ», այդպէս էլ արեցին Նազարեանցի հետ:

Ահա այդ կերպիւ, հայոց հասարակութեան հնամուխ և արամիտները և ինքնակոչ գիտնականներն, ինքնասէր ազգասէրներն իրենց ձեռքով թողեցին առաջ Հիւսիսափայլը և յետոյ իրենց հարազատ և անկեղծ մշակին—Ստեփաննոս Նազարեանցին:

Ստեփաննոս Նազարեանցի կենսագրութիւնը երկու հատորում պարզաբանել է պ. Լէօն:

3.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԽԱԳԵԱՆՅ

(Բժիշկ. Թարգման «gaudeamus igitur» երգի)

Սա Եկատերինադարցի էր, ծնուել էր 9 Մայիսի 1825 թ.: Աւարտելով Լազարեան ճեմարանը, մտաւ Դորպատի համալսարան 1844 թ. յունուարին, ուսանում էր բժշկականութիւն: Դորպատից անցել էր Կազանի համալսարան, և 1852 թ. կրկին Դորպատ էր ուսանում: Աւագեանցը այնուամենայնիւ Դորպատ չը վերջացրեց, այլ անցաւ Պետերբուրգի բժշկական ակադե-

միայն և այդտեղ վերջին քննութիւնը տուեց 1854 թ. և վախճանուեց Թիֆլիզում 1862 թ. բարակացաւից չբաւորութեան մէջ:

Վերադառնալով Կազանից Գորպատ, սա վայելում էր բոլոր հայ ուսանողների յարգանքը և իբրև աւագագոյն ուսանող ամենքի վրայ մի առանձին գերիշխանութիւն ունէր: Սրա խօսակցութեան գլխաւոր նիւթը և ընդհանուր ուղղութեան տիպարը կարող էր համարուել, ապրել հայի համար, գործել հայի համար եւ մեռնել հայ մնալով:

Աւագեանցը մեծացել էր չբաւորութեան մէջ, սիրում էր վառվռուն լեզուով խօսել ազգիս պիտոյքների համար և միշտ առանձին շնչոտելով պնդում էր. «Ով որ չգիտէ հայերէն, նա հայ չէ եւ չի կարող լինել»:

Սրա այս գաղափարը բանակուի էր առաջ բերում և յետոյ նա ինքն էր, որ յուզմունքը խողողացնելու համար, գրեթէ հայտարար դատաւորի դեր էր կատարում: «Բանակուիւր միշտ հարկաւոր է», պնդում էր Աւագեանցը և դարձեալ յարուցանում էր նորանոր հարցեր և սկսում էր նոր յուզմունք: Աւագեանցն այնքան սիրում էր ուսանողական կեանքը, որ լաւ էր համարում խեղճ կեանք վարել ուսանողների մէջ, քան թէ փարթամ և ճոխ ապրել իւր ծննդավայրում կամ նոր-Նախիջևանում, ուր նրա աւագ եղբայրը բաւականին նշանաւոր դեր էր խաղում այդ ժամանակներում:

Հոգով միշտ աշխոյժ, զուարթ, բնաւորութեամբ չափաւոր էր և պատրաստ նոր թխած ուսանողների հետ քէֆ ու զով անել: Սիրում էր երգելը և աշխատում էր, որ երգն անպակաս լինի ուրախութեան ժամերում, ցաւում էր, որ հայոց գրականութեան մէջ շատ քիչ երգեր կային, որոնք յարմար լինէին ուսանողական կեանքի համար, իսկ օտար երգերն յարմար չէր գտնում հայերի դրութեան համար և այն էլ օտար երկնքի տակ: Այդ անմխիթտոր ժամանակներում, նա գերմաներէնից փոխադրեց (ուխտի երգ) մի գեղեցիկ երգ, որ իր իմաստով տպաւորութիւն էր անում ուսանողների վրայ: Այդ ուսանողական երգն համապատասխան էր ջահէլ տրամադրութեան և սկսում էր այսպէս. «Որդիք Հայկայ, գտջիք ներկայ, ձերոց զգացմանց Տէր արքայ—լուարուք երգել գերգս երգոց, լուարուք զիմ ձայն եղբարք Հայոց», (Քնար-Հայկ.): Հետագայ ժամանակում գրեց «Հայոց գինի» երգը, որ սկսում է այսպէս-

«Աքցրէք, եղբարք, ձեր բաժակները և քաջ պարպեցէք»: (Գնար-
Հայկ.): Առաջին երգը երգուում էր ամեն անգամ և շատ
սիրելի էր, որովհետև յիշեցնում էր մեր անցեալը և նոր պա-
հանջը, որ դրած է ամեն քաղաքացու վրայ: Վերջին երգի ե-
ղանակը հնարեց ինքը հեղինակը և այդ պատճառով, երբ ներ-
կայ էր լինում ընդհանուր ուրախութեան ժամանակ, անպատ-
ճառ պէտք է ինքը սկսէր երգելը և խտտաբար պահանջում էր
իրան լսել և հետևել: Նրա ձայնը բաւականին ախորժալուր էր
և բարձր:

Աւագեանցի աշխատանքից նշանաւորն է հանրածանօթ
ընդհանուր ուսանողական հին երգի «gaudeamus igitur»-ի
թարգմանութիւնը, (ուրախասցուք ուրեմն):

Թէ գերմանացի և թէ ռուս ուսանողները և թէ պրօֆէ-
սորները յարգում էին Աւագեանցին և այդ էր պատճառը, որ
ամեն տեղ նա մտաք ունէր: Այդ բանը հայ ուսանողներին
շահաւէտ էր, որովհետև Աւագեանցի միջնորդութեամբ, օր ա-
ռաջ հայ ուսանողների խնդիրներն յաջողութիւն էին գտնում
թէ համալսարանում, և թէ արքունական վարչութեանց մէջ,
ուր նրան սիրալիք ընդունում էին և խնդիրքը կատարում: Ա-
ւագեանցն ինքն էլ ուրախութեամբ էր ընդունում պատգամա-
ւորութիւն, մանաւանդ, որ տեսնուում էր, թէ նորիկները չը
գիտենալով գերմաներէն լեզուն, դժուարանում էին իրենց գոր-
ծերն առաջ տանելու:

Աւագեանցն ընդհանրապէս բարեբար ազգեցութիւն ունէր
այն ժամանակուայ հայ ուսանողների վրայ:

4.

ԳԼՈՐԳ ԱԶԻՄՆԱՆ

(Ռպրոցական և Հասարակական գործիչ)

Սա Խաչատուր Աբովեանի աշակերտներէիցն էր, ծնուել է
Թիֆլիզում 1829 թ. Յուլիսի 20-ին, 4նաց Ռորպատ 1846 թ.
և մտաւ համալսարան 1848 թ. Սեպտեմբերին, ուսանում էր
բնագիտութիւն: Աքիմեանի մօտ էր «Վէրք Հայաստանի» ի ձե-
ռագիրը, որով Ռորպատեան ուսանողներն ուսումնասիրում
էին աշխարհաբար լեզուն:

1852 թ. Աքիմեանը հիւանդութեան պատճառով վերադարձաւ Թիֆլիզ և սկսեց իր գործունէութիւնը:

Աքիմեանը և Յովսէփ Յոնդոյեանցը 1853 թ. իրենց գումարով աւաջին անգամ տպագրեցին «Վէրք Հայաստանին»:

Աքիմեանը թարգմանեց գերմաներէնից հայ երեխաների համար 1) Ոսկէ ասեղներ հէքիաթը 1878 թ. և 2) Նալ և Դամայեանտի: Մնացած իր ժամանակը նա գործադրեց հասարակական և ուսումնարանական գործունէութեան, մանաւանդ նուիրեց նա իր ոյժերը Ներսիսեան դպրոցի բարեկարգութեան, ուր հոգարարձուի պաշտօն վարեց երկար տարիներ:

5.

ԳԱՐՐԻԷԼ ԽԱՏԻՍԵԱՆ

(Քիմիկոս Մանկավարժ):

Սա ծնունդ է Թիֆլիզում 1831 թ. փետրուարի 29-ին, ԽԱՐՈՎԻԱՆԻ աշակերտներէցն է: Վերջացնելով Լազարեան ճեմարանը, գնաց Իորպատ և մտաւ համալսարան 1848 թ. Սեպտեմբերին: Խատիսեանն ընտրեց բնագիտական ֆակուլտետը և մասնագիտաբար ուսանում էր քիմիա: Վերջացրեց 1851 թ.:

Վերադառնալով Թիֆլիզ, բացեց 1852 թ. մի պանսիօն, ուր սովորում էին 30—35 աշակերտ: Այդ պանսիօնը նա փակեց 1858 թ.:

Որպէս մանկավարժ, այն ժամանակ նա նշանաւոր էր Թիֆլիզում և միտս է, որ նա արդէն ծանօթ էր Ֆրեոբելի ուսման հետ և աշխատում էր իրագործել դրա մանկավարժական գաղափարները:

Խատիսեանը կարողացաւ պատրաստել 10 աշակերտ և ուղարկել համալսարան: Իրանց մասին խօսք կլինի յետոյ:

Պանսիօնը փակելուց յետոյ, Թիֆլիզի աստղաբաշխական դիտարանի նախագահի օգնականն էր և միշտ աւելի պարապում էր բնագիտութեանց վերաբերեալ հարցերով, յաճախ մասնակցում էր Եւրոպայի բնագիտական կոնգրէսներին և ինքն էլ անում էր զանազան հետազօտութիւններ: Առանձին մանրամասն աշխատութիւններ ունի Վովկասեան լեռների սառցակոյտերի (գլէտչէր) մասին: Խատիսեանի աշխատութիւնների մեծագոյն մասը տպագրուել է Թիֆլիզում հրատարակող «Дружескій Клубъ» ամսագրում:

Տպագրել է նոյնպէս 1) Սէր, հայ երեխանց ընծայ. Հատոր Ա. 1861 թ. Տիֆլիս, 2) Մանկավարժական խորհրդածութիւններ Ա. մասն 1882 թ. Թիֆլիզ: 3) О значеніи естествознанія (публичная лекція, читанная въ Декабрѣ 1893 г. въ Тифлисѣ). Խատիսեանը վախճանուեց Թիֆլիզում:

6

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՓԻՐԵԱՆ

(Նպիսկոպոս Կրօնական Հեղինակ)

Սա Հաշտարխանցի էր, ծնուեց Յունիսի 26-ին 1827 թ. կրթուեց Լազարեան ճեմարանում: Պետերբուրգի հայոց եկեղեցին ուղարկեց Աղափիրեանին Դորպատ, որ ուսանելուց յետոյ ընդունի հոգևոր կոչում:

1849 թ. սեպտեմբերին Աղափիրեանը մտաւ Դորպատի համալսարան և գրուեց կամերալիայի ¹⁾ ուսանող, բայց ուսանում էր Աստուածաբանութիւն: Մի քանի տարի Դորպատ մնալուց յետոյ, Պետերբուրգի եկեղեցական վարչութիւնն առաջարկեց նրան ընդունել հոգևոր կոչում և նա գալով Կովկաս, ձեռնադրուեց վարդապետ և ծերութեան ժամանակ—եպիսկոպոս: Սա եղել է վարժապետ Թէոդոսիայում, վերատեսուչ Շուշուայ աղգային ուսումնարանի, վանահայր Թելեթու: Գիտէր գերմաներէն, ֆրանսերէն լեզուները. Աղափիրեանը շատ սիրալիր և մեղմ բնավորութեան տէր մարդ էր: Ուսանող ժամանակ թարգմանել է ռուսերէնից հետեեալ ոտանաւորը «Մերթ խօսակցիս, մերթ լուռ կաս դու» (Քնար-Հայկ.): Աղափիրեանը յայտնի է նրանով, որ գերմաներէնից թարգմանեց քարոզների մի ամբողջ հաւաքածու: Նա վախճանուեց Ագուլիսի Ս. Թովմայի վանքում:

7

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՓԱՓԱՋԵԱՆ

(Նպիսկոպոս Մանկավարժ):

Սա Պօլսեցի է, ծնուել է 1830 թ. դեկտեմբ. 26 ին, կրթութեց Լազարեան ճեմարանում: Պետերբուրգի հայոց եկեղեցու

¹⁾ Կամերալ գիտութիւններ անուանում են ժողովրդի անասնութեան վերաբերեալ գիտութիւնները:

վարչութիւնն ուղարկեց Փափագեանին Դորպատ որ ուսանելուց յետոյ հոգևոր կոչումն ընդունի: Փափագեանը մտաւ Դորպատի համալսարան 1849 թ. սեպտեմբերին և գրուեց կամերալիայի ուսանող, բայց պարապում էր Աստուածաբանական գիտութիւններով:

Ուսանողութեան ժամանակ Փափագեանը գրեց երկու աստանաւոր, 1) Զննդ որդէք Արամեան կոչէ Հայաստան. (Քնար Հայկ.) 2) Զարթեայ ասէ ի քնոյ, ինձ հանգիստոյ գոյ: Այս երգերը գրեթէ բոլոր հայ ուսանողներն անգիր էին արել և երգում էին բոլոր հայ ուսանողական ակումբներում:

Փափագեանը Պետերբուրգի եկեղեցական վարչութեան սահանջին համաձայն, որի սանն էր նա, ուսումը չը վերջացրած, զնաց Պետերբուրգ: Մի անգամ նա ստիպուած էր եղել քարոզել Պետերբուրգի հայոց եկեղեցում, ահագին բազմութեան առաջ, ներկայութեամբ Լազարեանի և Աղաթոն Աքիմեանի: Փափագեանցն այնպէս գեղեցիկ և ազդու կերպով էր քարոզել աշխարհիկ յեղուով, որ հիացած, ապշած էր թողել ասմենքին: Հանգուցեալ Աղաթոն Աքիմեանը քարոզից յետոյ նըրան ասել էր, «հալալ լինի, որդի, քեզ վրա մսխած փողը» և ՚ի նշան շնորհակալութեան, հրաւիրել էր իր տուն և տուել էր նրան դրամական օգնութիւն:

Պետերբուրգից վերադառնալով Կովկաս ձեռնադրուեց քահանայ: Նա յաճախ քարոզում էր Թիֆլիզի եկեղեցիներում և մեծ հաւանութիւն էր գտնում: Կնոջ մահից յետոյ ընդունեց կուսակրօնութիւն: Քահանայ ժամանակ բացել էր Թիֆլիզում մասնաւոր ուսումնարան, ուր սովորում էին 8—10 աշակերտ: Այդ ուսումնարանում սովորում էր Աղ. Մանթաշեանը, ես (տողերիս գրողը), թուրք Աղալարովը, որ այժմ զինուորական է, տէր Աստուածատրեանցը, որ թարգմանեց «Горе отъ ума» հայերէնի: Փափագեանն ի վերջոյ ձեռնադրուեց եպիսկոպոս և վաղուց վախճանուած է:

8.

ԳԷՈՐԳ ՄԻՐՈՄԱՆԵԱՆ

(Հեղինակ շէյնիներ ձեր հոգուն մատող էրդ է):

Գ. Միրիմանեանը Թիֆլիզցի է, ծնուել է սեպտեմբերի

10-ին 1832 թ., կրթուել է Լազարեան ճեմարանում: Մտաւ համալսարան 1849 թ. սեպտեմբերին, ուսանում էր երկրագործութիւն: Միրիմանեանը Դորպատում ծանր հիւանդացաւ և կազմուրուելուց յետոյ ստիպուած եղաւ վերադառնալ հայրենիք, ուր առժամանակ ապրելով, վախճանուեց 1853 թ. բարակացաւից 26 տարեկան հասակում:

Միրիմանեանը մի բարեմիտ ներողամիտ երիտասարդ էր, սւնէր նախանձելի բնաւորութիւն: Նա իր ամբողջ ժամանակը նուիրած էր իր մասնագիտութեանը և մեծ հմտութիւն էր ձեռք բերել: Անյափ սիրում էր երաժշտութիւնը և միշտ ցաւում էր, որ ոչ մի երաժշտական գործիքի վրայ ածել չըզիտէր: Նա յաճախ մտածում էր Հայոց դրութեան մասին և յուսահատուած էր: Նրբեմն ասում էր. «վեր առ հայերին, վեր առ մեր կանանց, աղջկանց, մեր երիտասարդներին, ինչ են դոքա ներկայացնում: Ոչինչ: Աղջկերքը, որոնք պէտք է մայրեր դառնան, անկիրթ, ողորմելի արարածներ են» և բացականչում էր «ողբում գքեզ հայ աղջիկ, անգիր, անլեզու աղջիկ»:

Միրիմանեանը յայտնի է մեր գրականութեան մէջ, որպէս հեղինակ «Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատար», երգի, որ այժմ ամեն հասարակութեանց մէջ երգում են: Այդ երգը նրան անմահացրեց: Ահա թէ ինչ եղաւ այդ երգի գրելու պատճառը. Միրիմանեանցը բնակում էր վաճառական Տէօպֆերի տանը և ծանօթացել էր նրա աղջիկների հետ, որոնցից մէկը լաւ ածում էր դաշնամուրի վրայ: Միրիմանեանցի զգայուն սիրտը կպել էր այդ աղջկան: Նա իր գեղեցիկ, միակ երգը գրեց այդ աղջկայ սիրոյ, ներգործութեան տակ լինելով և վերագրեց հայոց աղջիկներին:

ՄԱՐԿԻԱՆՈՍ ՌՕՏԻՆԵԱՆՅ

(Բժշկապետ).

Սա Թիֆլիզեցի էր, ծնուել էր դեկտեմբերի 20 ին 1830 թ.: Վերջացնելով Լազարեան ճեմարանը, մտաւ համալսարան 1850 թ. յունուարին: Սկզբում գրուեց բնագիտական ֆակուլտետի ուսանող, յետոյ անցաւ բժշկական ֆակուլտետը: Բժշկապետի քննութիւնը տուեց 1854 թ. և մէկ տարի վերաբուժական կլի-

նրկայի ասիստէնտն էր: Վերադառնալով Թիֆլիզ, սկզբում ծառայում էր զինուորական հիւանդանոցում, ի վերջոյ թողնելով ծառայութիւնը պարապում էր որպէս մասնաւոր բժիշկ:

10

ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՕՆԵԱՆՅ

(Ուսուցիչ: Խմբագիր).

Մնուել է նոր Նախիջևանի Թոփաի գիւղում 1830 թ. սեպտեմբերի 3 ին: Սկզբում կրթուեց հին Ղրիմ-քաղաքում, յետոյ սովորեց Ղրիմու ս. Խաչ վանքում, Մանուէլ վարդապետ Գիւմուշլանցու մօտ: Սարգիս Տիգրանեանցը, մասնակցելով Սիմօնեանցի վիճակին, ուղարկեց նրան Լազարեան ճեմարանը 1843 թ.: Մնալով այդ ճեմարանում վեց տարի, նա 1849 թ. գնաց Դորպատ, Պետերբուրգի եկեղեցու հաշուով, որ ուսումը վերջանալուց յետոյ ընդունի հոգևոր կոչում: Սիմօնեանցը մտաւ համալսարան 1851 թ. յունուարին և գրուեց կամերալայի ուսանող: Չը կամենալով հոգևորական դառնալ, մնաց Դորպատում մինչ 1853 թ. և դուրս գալով համալսարանից, գնաց Թիֆլիզ: Այստեղ հէնց սկզբից պարապեց ուսուցչութեամբ և յետոյ ամբողջ կեանքը նուիրեց ազգային գործունէութեան: Սիմօնեանցի աշխատութիւնները. 1). Սրբազան պատմութիւն հին և նոր ուխտի, 2). Ընդհանուր պատմութիւն (համառօտ) հին և միջին դարերի, Սիմօնեանցը հրատարակում էր «Մեղու Հայաստանի» լրագիրը 25 տարի շարունակ: Խմբագրեց «Արարատը» 3¹/₂ տարի: Ուսուցչութիւն և տեսչութիւն արեց ազգային դպրոցներում 1853—83 թ., գլխաւորապէս Ներսիսեան դպրոցում:

Այժմ հեռանալով գործունէութիւնից և ստանալով հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանցի կտակին համաձայն կենսաթոշակ տարեկան վեց հարիւր ուուրի ապրում է Թիֆլիզում:

Սիմօնեանցը շատ ժիր ու աշխոյժ մարդ էր և կատակասէր: Այդ բնաւորութիւնը նա պահպանել է մինչև այժմ: Բնաւորութեամբ նա դարձիւ է, ինչ որ ունեցել է, պատկանել է իր բարեկամներին: Մենք ցանկանում ենք այդ զուարճալից և բազմաշխատ ազգային մշակին երկար և առողջ կեանք:

ՔԵՐՈՎՔԷ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(Պրոֆ. Հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան Պետերբուրգի Համալսարանի).

Գ. Պատկանեանը ծնուեց Ստաւրապօլում մայիսի 4-ին 1838 թ., սա Պետրոս աւագ քահանայի որդին է, մօր կողմից թաւն Յարութիւն վարդապետ Ալամդարեանի և հօր եղբօր օրդի է Ռափայէլ Պատկանեանի: Պատկանեանը կրթուեց Հազարեան ճեմարանում: Պետերբուրգի Հայոց եկեղեցու վարչութիւնը սրան ուղարկեց Դորպատ, որ աւարտելուց յետոյ ընդունի հոգեւոր կոչում: Պատկանեանը մտաւ համալսարան 1851 թ. յունուարին և ուսանում էր կամերալիա: Զունենալով ոչ մի ձգտում հոգեւորական դառնալու, իրեն ազատ համարեց այդ պարտաւորութիւնից և յետոյ դրամական նեղութիւններ քաշելով, թողեց համալսարանը 1852 թ. գնաց Պետերբուրգ և յետոյ Ստաւրապօլ: Այդտեղ նա մտաւ գիմնազիա որ իրաւունք ստանայ ռուսաց համալսարան մտնելու: Յետոյ 1853 թ. նրան ուղարկեցին Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտը և այդտեղ վերջացնելով 1857 թ. պատմական բաժնում, վերագարձաւ Կովկաս և նշանակուեց ռուսաց գրականութեան ուսուցիչ Թիֆլիզի օրիորդաց ինստիտուտում, բայց կարճ միջոցից յետոյ գնաց Պետերբուրգ, ուր ուսումնասիրում էր ընդհանուր պատմութիւնը, լեզուագիտութիւնը (1859 թ.): Այդ միջոցին Պետերբուրգի համալսարանի արևելեան ֆակուլտետի Հայոց լեզուի ամբիոնը դատարկ մնաց: Պատկանեանի մէջ միտք յղացաւ այդ ամբիոնը ստանալ և նա սկսեց պարապել հայերէն լեզուով ու յետոյ Հայոց պատմութիւնով և տպագրեց մի փոքրիկ աշխատութիւն—Catalogue de la litterature armenienne depuis le commencement du IV siecle jusque vers le milieu XVII, գիտութեանց ակադեմիայի բիւլլետէնում (1860 թ.): Մի տարուց յետոյ, գիտնական Էմիլի առաջարկութեամբ նշանակուեց արևելեան ֆակուլտետի, հայոց լեզուի պրօֆ. օգնական: Դրանից յետոյ գիտութեանց Ակադեմիայի յանձնարարութեամբ թարգմանեց մի քանի կարևոր պատմական շարագրութիւններ, որոնք տպագրուեցին առաջին անգամ նա պաշտպանեց իր մագիստրոսական գիտերտացիան— «Опытъ исторіи династіи Сясанидовъ по Армянскимъ ис-

точникамъ» (С. П. Б. 1863) և մէկ տարուց յետոյ պաշտպանեց իր դօքտորական դիսերտացիան—«ИЗСЛѢДОВАНИЕ О СОСТАВѢ АРМЯНСКАГО ЯЗЫКА» և հաստատուեց որպէս օրդինարնի պրօֆէսոր: Այդ ժամանակից սկսած Պատկանեանը յայտնուում է որպէս անխոնջ մշակ: Համարեա ամեն տարի նա տպագրում էր իր մի հեաազօտութիւնը, թարգմանութիւնը կամ իր հեղինակութիւնը հայոց լեզուի, պատմութեան, գրականութեան, կամ աշխարհագրութեան վերաբերմամբ: Եւ նա այդպէս աշխատում էր մինչ իր կեանքի վերջը: Պատկանեանը վախճանուեց ապրիլի 2-ին 1889 թ. 56 տարեկան հասակում:

Քննելով պատկանեանի աշխատութիւնները, տեսնում ենք որ նրա գրուածքները վերաբերում են գլխաւորապէս հայոց լեզուին և պատմութեանը:

Պատկանեանը յայտնի էր նոյնպէս Եւրոպայում որպէս գիտնական: Նրա աշխատութիւններից մի քանիսը թարգմանած են ֆրանսերէնի և գերմաներէնի: Նա անդամ էր զանազան գիտնական ընկերութիւնների և մասնակցում էր արեւելագիտների ժողովներին Եւրոպայում: Պատկանեանի աշխատութիւնների թիւն հասնում է 40 ի:

Քեր. Պատկանեանը, որպէս զուարճասէր ուսանող, թարգմանել է գերմաներէնից հեանեալ ուսանողական երգերը.—

1. Ուսանող. այն ինչ ազգ է, այն ինչ ցեղ է:
2. Ուսանողի կեանքը. ուսանողաց կեանքից գեղեցիկ կեանք չիկայ:
3. Ուսանողի բարեւը. Եղբարք ուսանողներ ես գնում եմ:
4. Կրամբամբուլի. կրամբամբուլին էս էն օղին է:
5. Կենաց բաժակ. եղբարք մի շուրջ ժողովեցէք:
6. Մխախտտի երգ. թէ ծխաքարչը ձեռիս:
7. Մայրիկ իմ աղաւնիկ, լոյս արեգական (ուուս. թարգմ.):
8. Ինձ համար չէ գարնան գալը:
9. Վերջին վարդ:
10. Անտօն. մէկ հայ մարդ ունէր գեղեցիկ մի կին:
11. Հին շոր. ինձ չի մոռանաս, հին շոր, որին սիրել եմ (թարգմ. Բերանժէից):

Բժ. Լ. Տիգրանեան.

(վերջը հետեւեալ համարում)